ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ՝ ՆԱԽՆԱԿԱՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ «ՆԱԽՆԱԿԱՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՌԱՁՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԴՊՐՈՑ՝ «Պողոս–Տեր Դավթյանի անվան Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱՐԹՈՒՐ ԱՐՄԱՂԱՆՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԿԱՊԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն **3**

Հանրակրթության նպատակը և խնդիրները **4**

«Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկան և ռազմահայրենասիրական դաստիարակությունը հանրակրթական դպրոցներում 7

Եզրակացություն **9**

Առաջարկություններ **10**

Օգտագործված գրականություն **11**

Օրենքներ և օրենսդրական ակտեր **11**

Ներածություն

Ցանկացած պետության պաշտպանությունը տվյալ պետության և ժողովրդի կարևորագույն խնդիրն ու պարտականությունն է: Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը (ՀՀ Սահմանադրություն, հոդված 46): Պետությունը այդ խնդիրն իրականացնում է զինված ուժերի միջոցով:

Հզոր և մարտունակ բանակ ունենալու համար անհրաժեշտ է ոչ միայն ժամանակակից սպառազինություն և տեխնիկա այլ նաև բանիմաց , խիզախ , հայրենասիրական ոգով օժտված զինվորներ և սպաներ : Չթերագնահատելով հասարանության և ընտանիքի դերը ապագա զինվորի կրթման և ռազմահայրենասիրական դաստիարակության գործում , պետք է նշել, որ այդ ամենի ամբողջ պատասխանատվությունը դրված է հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա: Դպրոցն է այն դարբնոցը որտեղ կրթվում և դաստիարակվում է մեր վաղվա զինվորն ու սպան :

Արցախյան պատերազմի և հատկապես 2020թ. 44 օրյա պատերազմի ողջ ընթացքը ցույց տվեց , որ երկրի զինված ուժերի մարտունակությունը կախված է հատկապես անձնակազմի բարոյահոգեբանական և կամային բարձր հատկանիշներից: Հաղթում է այն բանակը, որն ավելի լավ է պատրաստված, որտեղ բարձր է զինվորական կարգապահությունն ու մարտական ոգին, որի սպաներն ու զինվորները հմտորեն տիրապետում են ռազմական տեխնիկային, կարողանում են ռազմարվեստի մեջ նոր, արդյունավետ ձևեր ու մեթոդներ կիրառել, բարդ իրադրություններում, առանց խուճապի ճիշտ որոշումներ կայացնել:

ՀՀ ԶՈՒ խնդիրների, առանձնահատկությունների և նշանակության, հայոց բանակի պատմական ավանդույթների, այսօրվա զենքի ու ռազմական տեխնիկայի, կանոնադրությունների և արարողակարգերի մասին վաղվա զինվորներն ու սպաները տեղեկանում են են հենց աշակերտական նստարանից, և հենց առաջին տպավորությունն էլ վճռորոշ է լինում նրանց որպես անհատ և քաղաքացի ձևավորման և մասնագիտական կողմնորոշման գործում :

Հանրակրթության նպատակը և խնդիրները

Հանրակրթության հիմնական խնդիրներն են սովորողների կողմից բնության, հասարակության, տեխնիկայի, արտադրության և բնապահպանության մասին հիմնարար գիտելիքների յուրացումը, շարունակական կրթության համակարգում նրանց ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելը, համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, ազգային մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացի ձևավորելը, սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինպատրաստության համալիր ծրագիր իրականացնելը:

Հանրակրթության գլխավոր նպատակը երեխաների, սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը: («Կրթության մասին» ՀՀ օրենք)

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է: (ՀՀ Օրենք Հանրակրթության մասին , Հոդված 4.2)

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Կրթությունը հանրային արժեք է, որի պատասխանատուն պետությունն է: Հասարակությունը կիսում է կրթության քաղաքականության մշակման և իրականացման պատասխանատվությունը, որը ենթադրում է ներառական հանրային գործընթաց: Քաղաքացիական հասարակությունը, ուսուցիչներն ու դասախոսները, մասնավոր հատվածը, համայնքը, ընտանիքը, երիտասարդներն ու երեխաները կարևոր դեր ունեն որակյալ կրթության իրավունքի իրացման գործում: Պետության դերը վճռորոշ է կարգավորող սկզբունքների և նորմերի սահմանման համար:

Կրթության զարգացման գլխավոր նպատակն է կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը յուրաքանչյուր քաղաքացու կյանքի բոլոր փուլերում հնարավորություն է տալիս ստանալ իր պահանջմունքներին, մտավոր կարողություններին ու ձգտումներին համապատասխան որակյալ կրթություն, բավարարում է տնտեսության ու հասարակության պահանջները, լիարժեք ծառայում է ազգային շահերին:

Կրթությունը նաև մարդու հիմնարար իրավունք է: Պետությունը ապահովում է համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն:

Կրթությունը նպատակաուղղված է մարդու անձնային և մասնագիտական լիարժեք զարգացմանը, դաստիարակելու ազգային և համամարդկային արժեհամակարգ՝ խարսխված հայրենասիրության, հանդուրժողության, փոխըմբռնման, ժողովրդավարության, համագործակցության և խաղաղություն գաղափարների վրա:

Պետությունը երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

- կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը.
- կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ.
- կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը.
- միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը.
- սփյուռքում հայապահպան կրթական գործունեությանն աջակցելը.
- ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը.
- ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը.
- պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը.
- ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը:
- Կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման, նրանց ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը:

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

- սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.

- սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը.
- հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը.
- հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

Հանրակրթության նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումն է, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը, մասնագիտական կողմնորոշումը, նրան ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթությանը նախապատրաստելը:

Ընդհանրական որակական պահանջները որոշակիացվում և ամրագրվում են հանրակրթական առարկաների չափորոշիչներում և ծրագրերում: Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերի շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական պահանջները և սովորողների գնահատման համակարգը:

«Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկան և ռազմահայրենասիրական դաստիարակությունը հանրակրթական դպրոցներում

Հայաստանի Հանրապետության հանրակրթության բնագավառում առանձնահատուկ նշանակություն և կարևոր առաքելություն ունի «Նախնական զինվորական պատրաստություն» դասընթացը, որի նպատակն է՝ պատրաստել ռազմահայրենասիրական ոգով դաստիարակված, ռազմագիտական անհրաժեշտ գիտելիքներ և բարոյակամային բարձր հատկություններ ունեցող պատանիներ և աղջիկներ :

Հանրակրթական «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկայի պլանավորումը և դասավանդումը կազմակերպվում և անցկացվում է համաձայն «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի չափորոշչի և ծրագրի:

«ՆԶՊ» առարկայի դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից.

- ՀՀ զինված ուժերի և ռազմարվեստի պատմություն
- մարտավարական հիմունքներ
- կրակային պատրաստություն

- համազորային կանոնադրություններ
- շարային պատրաստություն
- ռազմական տեղագրություն
- միջազգային մարդասիրական իրավունք
- առաջին բուժօգնություն

Հանրակրթական դպրոցներում ՆԶՊ առարկայի դասավանդումը պատանիներին հնարավորություն է տալիս ստանալ նախնական ռազմական գիտելիքներ և դրանք լավագույնս կիրառել զինվորական ծառայության ժամանակ:ՆԶՊ առարկայի դասավանդումը համապետական կարևորագույն խնդիր է լուծում՝ նախազորակոչային տարիքի պատանիներին նախապատրաստելով զինվորական ծառայության, ինչպես նաև նպաստելով ֆիզիկապես և բարոյապես առողջ, բազմակողմանի զարգացած երիտասարդներ դաստիարակելուն:

Յուրաքանչյուր պատանի պետք է իրեն նախօրոք պատրաստի այն մտքին, որ զինվորական ծառայությունը պարտադիր է բոլորի համար, և ինքը պետք է լինի ֆիզիկապես կոփված, մտավոր ու հոգևոր ներուժով բարոյական վեհ արժանիքներով օժտված անձնավորություն, ծանոթ լինի զինվորական ծառայության առանձնահատկություններին, ունենա ռազմագիտական նվազագույն անհրաժեշտ գիտելիքներ և ունակություններ:

Սկզբունքներն են՝

- ազգային լավագույն ավանդույթների պահպանում և խորացում,
- ՆԶՊ զուգակցում միջազգայնորեն ընդունված զինված ընդհարումների իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի նորմերին,
- հայոց բանակի պատմության և ավանդույթների պահպանման ու զարգացման նպատակաուղղվածություն,
- ՆԶՊ դասավանդումը պարզից բարդին անցնելով՝ սկզբում վարժաձևերի կատարումը ըստ տարրերի, այնուհետև՝ դրանց ամբողջական կատարման,
- ՆԶՊ գիտելիքների կիրառական փորձառության ձեռքբերում գործնական պարապմունքների ժամանակ հրաձգարաններում և զորամասերում,
- դասավանդման մեթոդական բազմազանություն՝ ուսումնական զենքի, սարքերի, պաստառների առավելագույն օգտագործմամբ,
- ՆԶՊ միջառարկայական կապերի օգտագործում:
- Ուսուցումը կազմակերպվում է ինտերակտիվ՝ փոխներգործուն մեթոդներով, սովորողը հնարավորություն ունի արտահայտել իր խոսքն ու կարծիքը ստեղծագործել, դրսևորել իր գիտելիքներն ու ունակությունները երկխոսության, տարբեր վարժությունների միջոցով:

Խնդիրներն են՝

- ապահովել սովորողների կողմից «Նախնական զինվորական պատ-րաստություն» առարկայի պետական ուսումնական ծրագրի յուրացումը,

- սովորողներին պարզաբանել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի
  խնդիրները, առանձնահատկություններն ու նշանակությունը,
- սովորողների մեջ դաստիարակել ազգային բանակում ծառայելու անհրաժեշտության զգացում,
- կազմակերպել զինվորական երդման, համազորային կանոնադրությունների
  պահանջների ուսումնասիրում և սովորողների մեջ դաստիարակել դրանք անվերապահորեն կատարելու պատրաստակամություն,
- պատանիներին ծանոթացնել զորամասերի զինվորական անձնակազմի կյանքին ու կենցաղին, զենքին ու զինտեխնիկային,
- տեսական և գործնական պատրաստության միջոցով սովորողներին ծանոթացնել շարային և կրակային պատրաստության հիմունքներին,
- սովորողներին զինել անհրաժեշտ նվազագույն ռազմական գիտելիքներով, ապահովել անվտանգ կենսագործունեության հիմունքների յուրացումը,
- դասավանդման ընթացքում սովորողների մեջ ներարկել ռազմարվեստի յուրացման կարողություններ, դրանց կիրառման հմտություն և կամային բարձր հատկանիշներ,
- սովորողների մեջ ձևավորել քաղաքացիական պաշտպանության ազդանշաններով գործելու, անհատական պաշտպանական միջոցներից օգտվելու ունակություն,
- դաստիարակել հայոց բանակի պատմական ավանդույթներին ծանոթ, ֆիզիկապես և բարոյապես առողջ, դիմացկուն, բազմակողմանի զարգացած, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ պատանիներ,
- սովորողների շրջանում իրականացնել մասնագիտական կողմնորոշման աշխատանք՝ ըստ նախասիրությունների ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու նպատակով,
- զարգացնել արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու, գործելու կարողություն և կամային հատկանիշներ,
- նրանց ուսուցանել առաջին օգնություն ցույց տալու հմտություն:

Եզրակացություն

Ամենևին չնսեմացնելով հանրակրթական դպրոցներում դասավանդվող մնացած առարկաների դերն ու նշանակությունը մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում , հաշվի առնելով մեր տարածաշրջանի ռազմաքաղաքական դրությունը, մեր երկրի աշխարհագրական դիրքը , հարևան պետությունների հետ տարածքային խնդիրները և մեր մարդկային ու նյութական սահմանափակ հնարավորությունները առանձնահատուկ նշանակություն է ստանում հանրակրթական դպրոցներում «Նախնական զինվորական

պատրաստություն» առարկայի դասավանդումը և ռազմահայրենասիրական դաստիարակությունը:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը հանրակրթական ուսումնական հաստատություններում համապետական կարևորագույն խնդիր է լուծում՝ նախազորակոչային տարիքի պատանիներին նախապատրաստում է զինվորական ծառայության, սովորողներին զինում անհրաժեշտ նվազագույն ռազմական գիտելիքներով, ապահովում անվտանգ կենսագործունեության հիմունքների յուրացումը ինչպես նաև նպաստում է ազգային բանակում ծառայելու և հայոց բանակի պատմական ավանդույթները շարունակելու սեփական պարտքը գիտակցող, կարգապահ, ֆիզիկապես և բարոյապես առողջ , բազմակողմանի զարգացած, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ, արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվող և աշխատանքային գործունեությանը պատրաստ քաղաքացու ձևավորմանը:

Սովորողների կողմից «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պետական ուսումնական ծրագրի յուրացումից բացի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասաժամերը , տարբեր ռազմահայրենասիրական խմբակներն ու ռազմամարզական խաղերը մեծ դեր ու նշանակություն ունեն նաև պատանիների ու աղջիկների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում :

Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և ռազմահայրենասիրական դաստիարակության պլանավորման և աշխատանքների կազմակերպման գործում մեծ դեր ունեն ուսումնական հաստատության զինվորական զեկավարները: Բացի դրանից զինղեկը իր մարդկային կերպարով, հայրենասիրական գաղափարներով, զինվորական պահանջկոտությամբ և կարգապահությամբ , ինչպես նաև անձնական օրինակով մեծ դեր է խաղում սովորողների և մանկավարժական կոլեկտիվի կարգապահության ամրապնդման և բանակ-հասարակություն կապերի սերտացման գործում:

Առաջարկություններ

Առաջարկում եմ .

- Հաշվի առնելով մեր պետության առջև ծառացած նոր մարտահրավերները, ավելի շատ ուշադրություն դարձնել հանրակրթական ուսումնական հաստատություններում «Նախնական զինվորական պատրաստություն»

առարկային և նրա ուսումնանյութատեխնիկական բազան վերազինելուն և թարմացնելուն:

- Հանրակրթական դպրոցներում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրում առաջարկում եմ 1-2 ժամ հատկացնել ՀՀ ԶՈՒ և հարակից երկրների բանակների սպառազինությունում առկա գերժամանակակից զենքերի (БМ-21 "Град", ТОС-1А «Солнцепёк», БМ-30 «Смерч», «Искандер-М») և անօդաչու սարքերի համառոտ տեղեկությանը: Այդ ժամերը կարելի է վեցնել ՀՀ ԶՈՒ ռազմարվեստի պատմության համար նախատեսված ժամերից՝ այդ թեմաները «Պատմություն» առարկայի ծրագրում ներառելու հաշվին:
- Հաշվի առնելով զինղեկի մարդկային կերպարի , արտաքին տեսքի , հագուկապի կարևորությունը և այն որ սովորողները ավելի են զգաստանում , ոգևորվում և ավելի լուրջ են վերաբերվում դպրոցներում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասաժամերին, երբ իրենց ուսուցիչը համազգեստով է, առաջարկում եմ բոլոր զինղեկներին ապահովել միանման, պատական նմուշի զինվորական համազգեստներով , մանավանդ, որ դա նաև օրենքի պահանջ է :

Օգտագործված գրականություն

- «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասագրքեր
- «Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները», Գ. Հովհաննիսյան, Ա. Զոհրաբյան և ուրիշներ
- «Նախնական զինվորական պատրաստություն: Ուսուցչի ձեռնարկ 8-9 դասարանցիների համար, Վ. Օհանյան և ուրիշներ, «Աստղիկ Գրատուն», Երևան , 2014թ.
- «Շարային պատրաստության մեթոդական ձեռնարկ» (Զինվորական ղեկավարի համար) Հ.Ստեփանյան, Վ.Օհանյան և ուրիշներ, «Էդիթ Պրինտ» , Երևան , 2005թ.
- «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներ:Նորմացուցային փաստաթղթեր: » (Ձեռնարկ ուսումնական հաստատությունների համար),Դ.Համբարձումյան, Վ.Օհանյան և ուրիշներ, «Զանգակ-97», Երևան, 2009թ.
- «Նախնական զինվորական պատրաստության դասի անցկացման կարգը: (Մեթոդական ձեռնարկ) » , Հ.Ստեփանյան,Վ.Օհանյան և ուրիշներ, «Կրթության Ազգային Ինստիտուտ» , Երևան ,2004թ.
- «Մանկավարժություն» Գ.Ե.Ղույումչյան
- «Մանկավարժություն» Յու. Կ. Բաբանսկի

Օրենքներ և օրենսդրական ակտեր.

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
- ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ
- ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ.
- ՁԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ.
- ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ /ԿԱՊԿՈՒ/ ԱՆՁԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ
- ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԵՎ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ՀԻՄՆԱԿԱՆ, ԱՎԱԳ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ, ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԱՁՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ, ԱՎԱԳ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ, ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՁՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ.
- ԼԵՁՎԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ.
- ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ
- ՆՁՊ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ